# «ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 2 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Թեմա՝ «ԱՆՀԱՏԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ՄՈՏԵՑՈՒՄԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ և ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ»**


**Առարկա՝** «Տարրական մանկավարժություն»

**Վերապատրաստվող ուսուցիչ՝** Մաթևոսյան Գայանե

**Ուսումնական հաստատություն՝** «միջն. դպրոց» ՊՈԱԿ

**Մարզ՝** «Սյունիք»

**Ղեկավար՝** Բալայան Լուսինե

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

## ԳԼՈՒԽ 1 «ԱՆՀԱՏԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ՄՈՏԵՑՈՒՄԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ և ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ»

1.1 Անհատակողմներոշիչ մոտեցումների դերը՝ որպես սովորողների առաջադիմությունն ու վարքը մշտադիտարկելու միջոց.....5

1.2 Ուսումնական գործընթացում հետադարձ կապի ապահովման եղանակներն ու ձևերը՝ որպես ուսուցչի կողմից կիրավող անհատակողմներոշիչ մոտեցում.....9

Եզրակացություններ.....17

Առաջարկություններ.....18

Օգտագործված գրականության ցանկ.....19

Հավելվածներ.....20

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական գերծընթացի հաջողությունը մեծապես կապված է ուսուցչի և սովորողի փոխհարաբերություններից, շփման եզրերից, մեկը մյուսի որակներն իմանալուց: Անհնար է կատարելագործվել և մեծ առաջընթաց գրանցել ուսուցման գործընթացում, երբ ուսուցչի համար կան անպատասխան հարցեր: Հետևաբար հաջողություններ գրանցելու համար շատ կարևոր է ճիշտ կերպով հետադարձ կապ ստեղծելու կարողությունների ձևավորումը: Կրթության մեջ հետադարձ կապը ասելով՝ հասկանում ենք ուսուցչի կողմից կրթական գործընթացի վիճակի և դրա մասնակիցների մասին տեղեկատվության ստացում:

Հետադարձ կապն իրենից ենթադրում է որոշակի գործողությանն ուղղված պատասխան, արձագանք, ինչը կարելի է դիտարկել որպես ուսուցչի կողմից իրականացվող անհատակողմներեշիչ գործիք: Օրինակ՝ ուսուցիչն արձագանքում է սովորողի կատարած աշխատանքին մեկնաբանությունների կամ առաջարկությունների տեսքով: Ստացվում է, որ հետադարձ կապն ուսումնառության ժամանակ սովորողների և ուսուցչի կատարած որոշակի քայլերի և գործողությունների փոխադարձ համարժեք արձագանքն է: Այսինքն՝ հետադարձ կապը միջոց է ուսուցչի գործողություններին սովորողների կողմից, սովորողների գործողություններին՝ ուսուցչի և մյուս սովորողների անդրադարձի: Այս մանկավարժական հնարը նախատեսում է ուսուցչի կողմից սովորողի ոգևորում, քաջալերում, ստուգող, բաց և փակ հարցեր, որոնք կօգնեն ուսուցչին հասականալ սովորողի ուժեղ ու թույլ կողմերը և արձանագրել իր մասնագիտական բացթողումներն ու սխալները: Սա նշանակում է, որ հետադարձ կապի համար ընտրված զանազան միջոցներն ու հնարները պետք է բխեն սովորողին միայն առաջ մղելու, իր ձեռքբերումները խորացնելու, թերացումներն արագ վերացնելու և արդյունքները բարելավելու նպատակից:

Այսպիսով, անհատակողմնորոշիչ այս հնարն իր գործիքներով թույլ է տալիս ուսուցչին հստակ պատկերացում կազմել սովորողի նախընտրությունների, հետաքրքրությունների, ուժեղ և թույլ կողմերի մասին: Այս մշտադիտարկման գործընթացի արդյունքում ուսուցիչը հնարավորություն է ստանում արագ բացահայտել առկա խնդիրները, բացահայտել սովորողների առանձնահատկությունները, կրթական կարիքները, կատարել առաջնային գնահատում, ուղղել սխալները, աշխատել բացթողումների շտկման վրա: Արդյունքում՝ սովորողն ավելի վստահ է առաջ շարժվում, հասկանում է՝ ինչի վրա է

հարկավոր ուշադրություն դարձնել, մեծանում է վերջինիս սովորելու, գիտելիքներով ու կարողունակություններով զինվելու մոտիվացիան:

**Հետազոտության թեմայի արդիականությունը:** Անհատակողմներեշիչ մանկավարժական այս հնարը իր ողջ բաղադրամասերով ու գործիքներով թույլ է տալիս, որ ուսուցիչը կարողանա հեշտությամբ կառավարել այն գիտելիքը, հմտությունն ու կարողությունը, որը սովորողը քաղում է դասից կամ ինչ-ինչ պատճառներով այդ ամենը վերջինիս բաց է թողնում: Հատուկ մեթոդների կիրառման, հարցադրումների, ինքնագնահատման ռուբրիկների օգնությամբ սովորողն ու իր գիտակցական ու իմացական մակարդակը ուսուցչի համար դառնում է ավելի հասանելի, ինչն էլ ենթադրում է ուսումնական գործընթացի արդյունավետություն ու կանխատեսելի վերջնարդյունք: Հենց վերը նշած հանգամանքներից էլ բխում է սույն հետազոտության արդիականությունը:

**Հետազոտության նպատակը:** Ցույց տալ անհատակողմնորոշիչ մոտեցումների դրական ազդեցությունը սովորողների առաջադիմության վրա:

**Հետազոտության խնդիրը**: Սահմանել այն եղանակները, մեթոդներն ու մանկավարժական հնարները, որոնց վրա հիմնվելով, ուսուցիչը դասի ընթացքում կարող է հետադարձ կապ ստեղծել՝ նպատակ ունենալով կառավարելի դաշտում պահել սովորողների գիտելիքների, հմտությունների ու կարողունակությունների ձեռքբերման գործընթացը:

# ԳԼՈՒԽ 1 «ԱՆՀԱՏԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ՄՈՏԵՑՈՒՄԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ և ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ»

## 1.1 Անհատակողմներոշիչ մոտեցումների ՝ որպես սովորողների առաջադիմությունն ու վարքը մշտադիտարկելու միջոց

Ուսուցչի կողմից ուսումնառության գործընթացում տարվող անհատակողմնորոշիչ բազմաբնույթ աշխատանքները մի համալիր գործողությունների շղթա են, որոնց միջոցով հնարավոր է զգալիորեն օպտիմալացնել ուսուցման գործընթացները: Այդ գործողությունների մեջ առանձնակի կարևորություն ունի հետադարձ կապի ապահովումը, ինչը թույլ է տալիս սովորողին տեսնել սեփական բացթողումը, թույլ, կողմերը, շտկել սեփական սխալները, իսկ ուսուցիչն էլ հնարավորություն է ստանում համապատասխան տեղեկատվությունից պատկերացում կազմել ուսումնական գուծընթացում ուսուցման ու դաստիարակության իրականացման ժամանակ այն ասպեկտների մասին, որոնց պետք է վերստին անդրադառնալ և ավելի շատ ուշադրություն դարձնել: Այս իմաստով հետադարձ կապը կարող է դրական ազդեցություն ունենալ ուսումնադաստիարակչական գործընթացի վրա, քանի որ սովորողին հստակ մատնանշվում է խնդիրն ու դրա լուծման եղանակը:

Տարբերում ենք հետադարձ կապի երկու տեսակ՝ արտաքին և ներքին: Արտաքին հետադարձ կապն ապահովում է ուսուցիչ-սովորող, սովորող-ուսուցիչ կամ սովորող-սովորող կապերը: Այս դեպքում ուսուցիչն ու սովորողները միմյանց կատարած գործողությունների վերաբերյալ իրականացնում են համապատասխան վերլուծություններ, բանակցում և փոխադարձաբար անդրադառնում աշխատանքում եղած ձեռքբերումներին և թերություններին: Իսկ ահա ներքին հետադարձ կապն իրենից ենթադրում է երկու սուբյեկտների՝ սեփական գործողությունների նկատմամբ կատարած ինքնաանդրադարձը: Երկու կողմերի կատարած ինքնանրադարձը թույլ է տալիս, որ կողմերից յուրաքանչյուրն իր բացթողումների կամ առավելությունների համար կատարի արձանագրումներ: Հենվելով այդ արձանագրումների վրա՝ ուսուցիչը կարող է ընտրել աշխատանքային գործունեության նոր ռազմավարություն, իսկ սովորողը բարելավել իր ուսումնառության որակը, եթե դրա անհրաժեշտության կարիքը կա: Հետադարձ կապը վերահսկողական գործառույթն ուղղված է կոնկրետ արդյունքի վրա, որն այս պարագայում կրթության որակի բարձրացումն ու ուսումնական գործընթացի

հասանելու ու արդյունավետ կազմակերպումն է: Մեր մանկավարժական փորձի հիման վարա կարող ենք պնդել, որ ավելի քիչ արդյունավետ է կարճաժամկետ հետադարձ կապը, որն արտահայտվում է սովորողների գիտելիքների միջանկյալ կամ վերջնական վերահսկողության մեջ:

Կրթության ոլորտում նպատակահարմար է լիարժեք օգտվել անհատակողմնորոշիչ այս մեխանիզմից, որը կարող է դառնալ սովորողների վրա ազդելու հզոր գործիք: Ուսուցչի համար կստեղծվի հնարավորություն ուժեղացնել, թուլացնել և ուղղորդել հետադարձ կապի ազդեցությունը: Հարկ է նշել, որ ժամանակակից կրթության միտումներն այնպիսին են, որ ուսումնական գործընթացը գնալով դառնում է մեխանիզացված, ուսուցչի և սովորողների միջև գնալով ավելի քիչ է լինում «կենդանի» շփումը: Կարելի է ասել, որ փաստացի հետադարձ կապն իրականացվում է, սակայն այս պարագայում արդյունավետ չի աշխատում: Ուսումնական նյութի յուրացումը հեշտացնելու համար հետադարձ կապը պետք է ունենա մի շարք առանձնահատկություններ.

- հավասարակշռություն,
- կոնկրետություն,
- օբյեկտիվություն,
- համապատասխանություն,
- հասկանալիություն
- հետևողականություն,
- համեմատելիություն
- բովանդակություն,
- բավարարություն,
- կառուցվածքայինություն,
- արդիականություն.

Պետք է նշել, որ հետադարձ կապը չպետք է պարտադրվի: Ուսուցիչը նախ պետք է համոզվի, որ սովորողը պատրաստ է ընդունել գովասանքը և հատկապես՝ քննադատություն, և որ հետադարձ կապի ընկալումը կլինի օբյեկտիվ[1]: Հետադարձ կապը հակված է շատ մեծ ազդեցություն ունենալ ուսումնադաստիարակչական գործընթացի վրա: Այնուամենայնիվ, այստեղ առանցքային է հենց ուսուցչի դերակատարումը: Նրա կողմից ներդրված անհատակողմնորոշիչ մշտադիտարկման մեխանիզմների համակարգը վերջինիցս պահանջելու է հետևողականություն, արագ

[1] http://storage.library.opu.ua/online/periodic/kms_2011_5/085-088.pdf О.В. Олещук, «Эффективная обратная связь в обучении», стр.85.

արձագանք ուսուցման այս ձևի արդյունքներին, ռեֆլեքսիա, կազմակերպչական ունակություններ, որոնք կարող են լինել թե' դրական, թե բացասական: Հետադարձ կապը պետք է լինի կոնկրետ, պարզ և հասկանալի սովորողների համար: Սովորողի գործողություններին անհրաժեշտ է արձագանքել ոչ միայն ճիշտը կամ սխալը մատնանշելով, այլ ավելի մանրամասն և ընդգրկուն մեկնաբանություններով: Օրինակ՝ քեզ մոտ ստացվեց որովհետև..., դու հաղթեցիր, քանի որ, դու ձախողեցիր, որովհետև...:

Սովորողների առաջադիմության մշտադիտարկումը ուսուցչին թույլ կտա արձանագրել դրական դինամիկան: Հարկավոր է անընդհատ խրախուսել և աջակցել սովորողներին, ինչը նաև մեծ մոտիվացիայի աղբյուր է: Միևնույն ժամանակ հարկավոր է սովորողին տալ կոնկրետ ուղղություններ, թե ինչպես կատարելագործվել, կուտակել կայուն գիտելիք: Սա ավելի նախընտրելի է, քան ուղղակի սխալների ու բացթողումների մատնանշումը: Շատ կարևոր է սովորողների կողմից կրթության կարևորության գնահատումը: Հետադարձ կապը մեծապես կարող է օգնել սովորողին, գիտակցելով ուսումնական գործընթացում հաջողություններ գրանցելու կարևորությունը, հստակ ռազմավարություն մշակել ավելի լավ սովորելու համար: Սովորողների առաջադիմությունը, սոցիալական վարքը մշտադիտարկելու եղանակներից է բանավոր զրույցը, երբ վերլուծությունները, արձանագրումներն ու շտկումներն իրականացվում են բանավոր քննարկման միջոցով: Բանավոր քննարկվում են այն գործողությունները, որոնք բարելավման կարիք ունեն: Կարելի է խնդիրների շուրջ մեկնաբանություններ անել նաև գրավոր եղանակով: Հետադարձ կապի իրականացման մեկ այլ միջոց են ինքնագնահատման ռուբրիկները, որոնք բավականին արդյունավետ են սովորողների անհատական առանձնահատկություններն ու կարիքները պացահայտելու տեսանկյունից: Այս եղանակի ընտրությունը կարող է բարձրացնել տեղեկատվության յուրացման արդյունավետությունը: Բավականին արդյունավետ են նաև սովորողներին հաճախակի տրամադրել հոգեբանական թեստեր այս կամ այն խնդրահարույց թեմաների վերաբերյալ:

Այնուամենայնիվ, հաջողելու, դասարանը կառավարելու համար ուսուցիչն անընդհատ պետք է վերանայի իր մանկավարժական կենսափորձը: Նոր տեխնոլոգիական գործիքները, դասի բազմաբնույթ ձևերն ու տեսակները, մեթոդների բազմազանությունն առաջին հայացքից կարող են ուսուցչի աշխատանքային գործընթացում ստեղծել խառնաշփոթ՝ դրանց ճիշտ ընտրության ու կիրառության առումով, սակայն ուսուցիչը պետք է գիտակցաբար մոտենա նորարարություններին, փորձի դրանք ընկալել ոչ թե ավելորդ պարտադրանք,

ժամանակատար գործընթաց, այլ յուրաքանչյուր նորարարական գաղափարի մեջ փնտրի, գտնի այն հետաքրքիր կետը, որից պետք է սկսի իր ինքնազարգացումը: Անշուշտ, նորարար ուսուցչի հետաքրքիր գաղափարները՝ այդ թվում հենց հետադարձ կապի կիրառությունը, միտված են մեկ նպատակի՝ սովորողին տալ հանրակրթական ծրագրերին համապատասխան գիտելիք և կարողունակություններ: Այս առումով շատ կարևոր են ուսուցչի մասնագիտական և անձնային որակները, մանկավարժական գործունեության մեջ նրա մղումներն ու ձգտումները: Մանկավարժական աշխատողը պարտավոր է հետևողականորեն կատարելագործել իր առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, իրականացնել ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ[2]: Ուսուցիչը նաև պետք է քաջ գիտակցի իր պաշտոնային պարտականությունները, իսկ մեթոդների և ուսուցման ձևերի ընտրության առումով նա միանգամայն ազատ է: Իսկ թե որչափ արդյունավետ կհամադրվեն նորագույն տեխնոլոգիաներն ու մեխանիզմները ուսումնական գործընթացի ժամանակ, կախված է ուսուցչից և վերջինիս աշխատանքը վերահսկող խորհրդակցական մարմիններից: Այս առումով շատ կարևոր է մանկավարժական փորձի փոխանակումը: Ուսուցիչների միջև աշխատանքային համագործակցության բարձր մակարդակը ևս նպաստում է ուսումնական գործընթացի արդյունավետ զարգացմանը: Հետևաբար, ուսուցիչները պետք է բաց լինեն գործընկերների հետ կառուցողական համագործակցային հարաբերություններ հաստատելու համար: Մանկավարժական աշխատողն իրավունք ունի համագործակցել գործընկերների հետ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով[3]:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ուսումնական գործընթացի արդիականացումն ու սովորողների առաջադիմությունը մեծապես կախված է ուսուցչի մասնագիտական ու մարդկային որակներից: Այս տեսանկյունից առանձնակի կարևորություն ունեն ուսուցչի կողմից կիրառվող անհատակողմներեշիչ մոտեցումները, շարունակական մշտադիտարկումները: Այստեղ կարևոր ենք համարում վերջինիս մասնագիտական պատրաստվածությունը նորորարական գործիքների ու մեթոդների կիրառման առումով: Սովորողների առաջադիմության վրա ուղիղ ազդող մի գործիք էլ հենց հետադարձ կապն է, որն ուսուցչի ձեռքում իսկական գործիք է սովորողներին խրախուսելու, նրանց կրթական կարիքները բացահայտելու, պասիվ դաշտից ակտիվ դաշտ բերելու և մոտիվացնելու համար:

---

[2] https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 27, կետ 5:

[3] Նույն տեղում:

## 1.2 Ուսումնական գործընթացում հետադարձ կապի ապահովման եղանակներն ու ձևերը՝ որպես ուսուցչի կողմից կիրավող անհատակողմներորոշիչ մոտեցում

Կրթական համակարգի բարեփոխումների ներկա փուլում առաջնահերթ խնդիրը կրթության որակի բարձրացումն է, կրթական բարենպաստ միջավայրի ապահովումը, որտեղ սովորողը կարող է անցնցում ձեռք բերել իմացական ու գործառական գիտելիքներ: Այս համատեքստում այսօր ընդունված է նախապատվություն տալ աշակերտակենտրոն ուսուցմանը, որտեղ սովորողը ուսումնական գործընթացում ունի ավելի ակտիվ դերակատարում: Այդ դերը կենտրոնացնելու, սովորողին ինքնուրույն գործելու և նախաձեռնողի դերում հանդես գալու համար լայն հնարավորություններ են ստեղծում ուսուցման փոխգործուն մեթոդների կիրառումը դասապրոցեսի ժամանակ, որոնք համապատասխանում են աշակերտակենտրոն ուսուցման սկզբունքներին և արդյունավետ են: Փոխգործուն մեթոդները բացառում են որևէ մեթոդի առաջնայնությունը, գերակայությունը, ինչպես նաև մեկ մեթոդի գերակշռությունը մյուսների նկատմամբ:

**Փոխգործուն ուսուցման սկզբունքներն են.**

- փոխազդեցությունը, փոխուսուցումը;
- երեխայի ակտիվությունը;
- համագործակցությունը;
- ինքնարտահայտման խրախուսումը;
- հետադարձ կապը:

**Փոխգործուն մեթոդների առանձնահատկություններն են.**

- սովորողի իմացական գործընթացների կազմակերպումը;
- հետաքրքրությունների բացահայտումը;
- համագործակցային կարողությունների զարգացումը;
- անհատական առանձնահատկությունների բացահայտումը;
- հաղորդակցական ունակությունների ձևավորումը;
- տրամաբանական մտածողության զարգացումը;
- ինքնուրույնության խրախուսումը;
- վերլուծական կարողությունների ձևավորումը:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ հետադարձ կապը փոխգործուն ուսուցման հիմնական սկզբունքներից մեկն է, ուստի դրա արդյունավետ կիրառման համար պետք է վերարժևորել սովորողի դերը դասապրոցեսի ընթացքում: Սովորողը

պետք է գիտելիքն ընկալի ու ամրապնդի գիտակցաբար, առանց մեխանիկական վերարդադրման կարողանան ձևակերպել իր խոսքը, ցուցաբերի նախաձեռնողականություն դպրոցում ստացած գիտելիքն ինքնուրույն զարգացնելու, համակողմանի ուսումնասիրելու առումով: Ստացվում է որ սովորողը այս պարագայում հանդես է գալիս որպես հետազոտող, տեղեկատվական հոսքերի մեջ արժեքավոր գիտելիքի վերհանող: Նման գործողությունների համար հենց ուսուցչից ստացած հետադարձ կապը կարող է ուղղորդել ու մոտիվացնել սովորողին:

Ճիշտ ու կառուցողական իրականացվող հետադարձ կապը սովորողների հետ լավ հարաբերությունների գրավականն է: Այս առումով իր աշխատանքը կազմակերպելիս ուսուցիչը պետք է ուշադրություն դարձնի մի շարք հանգամանքների վրա, որոնցից են.

1. **Սովորողին ուղղված կառուցողական նկատառումներ ու դիտարկումներ**

Հետադարձ կապի հիմնական կանոնը հետագա գործողությունների մասին խոսելն է: Անփույթ կամ ծույլ սովորողին նախատելու փոխարեն էլ ավելի նպատակահարմար է օրինակելի փորձի ցուցադրումն ու կոնկրետ քայլերի առաջարկը, որոնք կօգնեն նրան կատարելագործվել: Օրինակ՝ կարելի է ծույլ սովորողի վրա դնել մի պատասխանատու հանձնարարություն: Սովորողը մեծ մոտիվացիայով կփորձի կատարել աշխատանքը՝ արդյուքում քաղելով քաջալերման ու խրախուսանքի պտուղները:

2. **Սովորողի առանձնահատկությունների չանտեսումը**

Անշուշտ, նույն դասարանում սովորողներն ունեն տարբեր առանձնահատկություններ: Մի մասի համար կարևոր է քննադատական վերաբերմունքը, որից նրանք ազդվում են ու սկսում են կառավարվել, մյուսներն էլ կարիք ունեն գովասանքի, ուստի չպետք է համեմատել սովորողներին միմյանց հետ: Ավելի նպատակահարմար է վերլուծել յուրաքանչյուր սովորողի առաջընթացը՝ համեմատելով նրա նախորդ արդյունքների հետ:

3. **Սովորողների փոքրիկ հաղթանակների գնահատում**

Սովորողները հիանալի զգում են, երբ ուսուցիչը անկեղծ չէ և մեխանիկորեն գովում է նրանց: Բավական չէ միայն գովել. այդպես ուսուցչի խոսքը դադարում է արժեքավոր լինելուց: Ավելի նպատակահարմար է կոնկրետ մեկնաբանություններ տալ՝ ընդգծելով այն ձեռքբերումը, որն ունեցել է սովորողը, օրինակ՝ ամենից շատ ես կարողացել գրել կամ տեքստում ոչ մի սխալ չես թույլ տվել:

4. **Երկխոսություն սովորողների հետ**

Հետադարձ կապը ոչ միայն կարծիքն է աշակերտի մասին, այլ նաև սովորողի կարծիքը լսելն ու հաշվի առնելը: Հարկավոր է հաճախ խոսել, քննարկել սովորողների հետ, թույլ տալ, որ վերջինս առանց կաշկանդվելու պատմի իր հետաքրքրությունների ու մտահոգությունների մասին:

Հետադարձ կապը կարելի է համարել հաջողված, եթե այն ունենում է հետևյալ արդյունքները.

- Սովորողի մոտ ձևավորվել է հստակ պատկերացում իր ուժեղ կողմերի և նրանց զարգացման հնարավոր ուղիների մասին:
- Սովորողը ստացած տեղեկատվությունը ընդունում է և ներքին համաձայնության գալիս դրա հետ:
- Սովորողն ունի ցանկություն ուղղելու սեփական սխալները, և նա արդեն կատարել է առաջին քայլերն իր գիտելիքների բարելավման ուղղությամբ:

Անհատակողմներեշիչ մոտեցումների եղանակ է խմբային աշխատանքների իրականացումը, որոնք կարող են լինել բազմազան՝գրավոր աշխատանք, փոքրիկ խմբերով աշխատանք: Խումբը կատարում է իր հանձնարարությունը՝ միաժամանակ վերահսկելով մյուս խմբերի աշխատանքը: Կրտսեր դպրոցում մայրենիի դասին կարելի է հանձնարարել աշխատանք, ասենք՝ բաժանվել խմբերի, նշանակել խմբում գլխավոր խորհրդատու և գրել նկարագրական կամ վերլուծական տեքստ դասանյութի շրջանակներում: Խորհրդատուն հարցում է անցկացնում 2-3 հոգու շրջանում, իսկ մնացածը վերահսկում են գնահատման օբյեկտիվությունը: Հետո խորհրդատուի դերն անցնում է մեկ այլ սովորողի: Նմանօրինակ աշխատանքների իրականացումը ոգևորում է սովորողներին, բերում նրանց ակտիվ դաշտ, բարձրացնում մոտիվացիան ու աշխատունակությունը: Սովորող-սովորող հետադարձ կապի մոդելի ապահովման մեկ այլ եղանակ է հետազոտական աշխատանքների կամ մասնագիտական զեկույցների պատրաստումը: Աշխատանքը կարելի է հանձնարարել կատարել տանը: Ավարտված աշխատանքը ներկայացնում է խմբից ընտրված սովորողը: Ինչն է առանձնահատուկ. խմբի յուրաքանչյուր անդամի գնահատականը տալիս են հենց այս խմբի սովորողները: Յուրաքանչյուր գնահատական, դարձյալ, պետք է հիմնավորված լինի՝ հաշվի առնելով այն հանգամանքը, թե ինչ ներդրում է ունեցել սովորողն աշխատանքի մեջ:

Առարկայի, դասի թեմայի, դասընկերների կամ ուսուցչի մասին սովորողների տրամադրվածությունը պլարզելու համար կարելի է նրանց տրամադրել կարճ պատասխաններով հարցաթերեր:

**Աշխատանքի օրինակ՝**

| | | |
|---|---|---|
| 1/ Սիրու՞մ եք «մայրենի» առարկան: | ԱՅՈ | ՈՉ |
| 2/ Հաճույքո՞վ եք մասնակցում մայրենիիդասերին | ԱՅՈ | ՈՉ |
| 3/ Կցանկակայի՞ք մայրենիի դասաժամերը շատ լինեին: | ԱՅՈ | ՈՉ |
| 4/ Երբևէ պատահե՞լ է, որ դասը ձանձրացնի կամ հոգնեցնի: | ԱՅՈ | ՈՉ |
| 5/ Տնային առաջադրանքները հաճույքո՞վ եք կատարում: | ԱՅՈ | ՈՉ |
| 6/Սիրու՞մ եք հեքիաթներ կարդալ: | ԱՅՈ | ՈՉ |
| 7/Բանաստեղծությունները հեշտությա՞մբ եք անգիր սովորում: | ԱՅՈ | ՈՉ |
| 8/Ինքնուրույն կարողանու՞մ եք շարադրություն գրել: | ԱՅՈ | ՈՉ |
| 9/Ստուգողական աշխատանքներից վախենու՞մ եք կամ լարվու՞մ եք դրանցից: | ԱՅՈ | ՈՉ |
| 10/ Գերազանց գնահատականը ոգևորի՞չ է: | ԱՅՈ | ՈՉ |

Նմանօրինակ հարցաթերթերը բավականաչափ խոսուն արդյունքներ կարող են տալ ուսուցչին՝ թույլ տալով բացահայտել ու գնահատել սովորողների նախասիրություններն ու ցանկությունները:

Կարելի է սովորողներին հանձնարարել նաև ինքնագնահատման ռուբրիկներ, այսպես՝

| | |
|---|---|
| 1/ Գնահատի'ր խմբային աշխատանքին քո մասնակցությունը: | 1-5 |
| 2/ Արդյոք ինքնուրույն աշխատանքի | ԱՅՈ ՈՉ |

| | |
|---|---|
| ժամանակ ունեցա՞ր դժվարություններ, օգնություն խնդրեցիր: | |
| 3/ Դասը պատմելիս օգտագործեցի՞ր բառեր, որոնք գրքում չկային: | ԱՅՈ ՈՉ |
| 4/ Գնահատի՛ր այսօրվա դասին քո ակտիվությունը: | 1-5 |
| 5/ Ուսուցչի հարցադրումներին ինքնակամ ցանկացա՞ր պատասխանել: | ԱՅՈ ՈՉ |

21-րդ դարի արագ զարգացող հասարակության պահանջն է ունենալ այնպիսի քաղաքացի, ով կկարողանա ճկուն լուծումներ գտնել արագ փոփոխվող պայմաններում, կլինի նախաձեռնող, կունենան սեփական ակտիվ դիրքորոշում, ստեղծագործական ու քննադատողական մտածողություն, ինչպես նաև չենթարկվելով արտաքին բացասական ազդեցություններին՝կկարողանա ինքնավերլուծություն կատարել և առաջ քաշել սեփական ինքնագնահատման ու ինքնակառավարման մեխանիզմներ: Կրթության համակարգում ժամանակակից անձնակողմներոշիչ հարացույցի հաստատման ու գործարկման հրամայականով պայմանավորված՝արդիական ու հրատապ է դարձել սովորողի անձի ինքնուրույնության աստիճանի բարձրացման ու ինքնակողմներոշվող դիրքորոշման ձևավորման հիմնախնդիրը:

Ավելին, կրթականգիտությունների ժամանակակից հետազոտությունները բխում են սովորողի ինքնավերլուծության և ինքնագնահատման արդիական հիմնախնդրից: Վերլուծության և հատկապես ինքնավերլուծության գործընթացը թերի կհամարվի, եթե այն չամբողջանա կշռադատման կամ գնահատման գործընթացով, որտեղ առանձնահատուկ նշանակություն ունի ինքնագնահատումը: Այստեղից էլ բխում է սովորողների ինքնագնահատման մեթոդների ակտիվորեն կիրառման հարցը հենց դասավանդման գործընթացում: Ինչպես վերը նշել էինք, ինքնագնահատման մեթոդներից առանձնացվում են ռուբրիկավորումը կամ ցուցանիշավորումը, չափանիշային աղյուսակի կազմումը, ռեֆլեքսային կազմակերպումը, նախագծային ինքնագնահատումը, խմբային աշխատանքի ինքնագնահատումը, հետադարձ կապի հարցարանների լրացումը[4]: Այսպիսով,

[4] http://www.ysu.am/files/Anna_Aleksanyan_%202016.pdf Ա. Ալեքսանյան, Սովորողների ինքնավերլուծության և ինքնագնահատման մեթոդների կիրառման հիմնախնդիրը դասավանդման գործընթացում, ՀՊՄՀ, Երևան, 2016, էջ 11-13:

սովորող-սովորող հետադարձ կապի մոդելի իրականացման համար կարելի է ընտրել մի շարք ակտիվ մեթոդներ, որոնք և ապահովում են սովորողների համատարած մասնակցությունը դասին և ստեղծում են հետադարձ կապ, որը թույլ է տալիս ուսուցչին անընդհատ վերահսկել սովորողի առաջադիմությունը:

Ուսուցչի կարևորագույն գործառույթը սովորողների ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացները մանկավարժորեն կառավարելն է՝ հաշվի առնելով նրանց հոգեբանական, տարիքային առանձնահատկություններն ու ընդունակությունները, զարգացման մակարդակը, կրթական կարիքները՝ ստեղծելով համապատասխան մանկավարժական պայմաններ: Մանկավարժական գործընթացի կառավարումը նախևառաջ սկսվում է նպատակի առաջադրումից, սովորողների ֆիզիկական և հոգեկան առանձնահատկությունների հաշվառումից, առանց որոնց հնարավոր չէ արդյունավետորեն իրականացնել մանկավարժական գործընթացը: Սանկավարժական գործընթացի արդյունավետ իրականացման համար կարևոր են նաև մանկավարժական հայտորոշումը և արդյունքների կանխատեսումները, որոնք ուսուցչին տալիս են մեկ քայլ առաջ տեսնելու, սեփական գործունեության արդյունքները նախագծելու հնարավորություն: Մանկավարժական գործընթացի կառավարումն իրականացնում է որոշակի փուլերով.

- ուսուցչի վարած ուսումնադաստիարակչական գործընթացի բովանդակության նախագծում, արդյունքների կանխատեսում,
- աշխատանքի պլանավորում, նպատակների փուլային իրականացում,
- արդյունքների վերլուծություն և ամփոփում:

Տարրական դպրոցի ուսուցչի կարևոր մասնագիտական որակներ են՝ առարկայական գիտելիքների առկայությունն ու համակարգայնությունը, ուսուցման մեթոդների, տեխնոլոգիաների, միջոցների ու ձևերի տիրապետումը, նորարարական մոտեցումների ու մասնագիտական համոզմունքների առկայությունը և այլն: Մասնագիտական կարևոր հատկանիշներ են նաև աշխատասիրությունը, կարգապահությունը, խոսքի և հաղորդակցման մշակույթը, կազմակերպվածությունը, պահանջկոտությունը[5]:

Կառուցողական հետադարձ կապ ստեղծելու համար կարևոր է, որ սովորողը հասկանա, թե տվյալ պահին ինչպիսի գիտելիքների ու կարողունակությունների պաշար ունի: Արդյոք դա բավարար գիտելիք է և համապատասխանում է կրթական չափորոշիչների պահանջներին: Այս արձանագրումները ուսուցչի հետ կատարելուց հետո սովորողը սկսում է փնտրել եղանակներ ու միջոցներ, որպեսզի տեսանելի

[5] https://innostud.am/application/library/61279671.pdf «Տարրական կրթության մանկավարժություն»:

դարձնի այդ շրջափուլի հաղթանակը: Այդ հաղթանակին մոտենալու համար կատարած աշխատանքն էլ ավելի է մոտիվացնում սովորողին: Հաջորդիվ համադրելով այս ամենը՝ ուսուցչի հետ համատեղ սկսվում է ճանապարհային քարտեզի նախագծում: Արդեն սովորողի համար տեսանելի են միջոցները, ճանապարհներն ու նպատակը, թե ուր է գնում, ինչպես է գնում, ինչի համար է գնում: Անշուշտ, հետադարձ կապի արդյունավետության հիմքում նաև նախաձեռնող ու ակտիվ սովորողն է, ում համար հետադարձ կապը բավականին հետաքրքիր միջոց է իր կրթության որակը ուսուցչի հետ համատեղ բարելավելու համար:

Կատարած հետազոտությունները հիմք ընդունելով՝ կարող ենք ասել, որ ուսումնադաստիարակչական գործընթացում անձնակողմնորոշիչ մոտեցումները հնարավորություն են ստեղծում մշտադիտարկել սովորողների առաջադիմությունը, հնարավոր վարքային խնդիրներինառաջացումը: Այս ամենը ուսուցչին հնարավորություն է տալիս բացահայտել հիմնախնդիրը, վերահսկել դրա զարգացումն ու համալիր միջոցառումներ ձեռնարկել առկա խնդիրները լուծելու համար:

Որքան կառուցողական է ուսուցչի մոտեցումը , որքան շեշտադրվում են սովորողների ձեռքբերումները և իրականացվում է աշխատանքի պատշաճ վերլուծություն, այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ սովորողները շարունակաբար կբարելավեն իրենց առաջադիմությունը, կվերանայեն հնարավոր վարքային խանգարումները: Այս գործընթացում առանցքային նշանակության հարց է դասարանում բարոյահոգեբանական կայուն մթնելորտն ու սովորողների կողմից արժեքային համագարգի կարևորումը: Հարկավոր է պայմաններ ստեղծել, որ սովորողն իրեն հարգված և կարևորված զգա, հասկանա, որ իր կրթությունը ձևական բնույթ չի կրում: Սովորողն իրավունք ունի պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները, կամ ոտնձգություն է արվում նրա պատվին ու արժանապատվությանը[6]:

Կարծում ենք, որ սույն հետազոտության ընթացքում ձեռք բերած գիտելիքները կօգնեն մեզ՝ ուսուցիչներիս, արդյունավետ իրականացնել ուսումնական գործընթացի մշտադիտարկում, ժամանակին արձանագրել կրթական մի շարք խնդիրներ և կիրառելով հետադարձ կապ՝ համագործակցային հարաբերությունների

[6] https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 20, կետ 5:

մեջ մտել սովորողների հետ՝ նպատակ ունենալով վերասկել ու բարձրացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով ուսումնական գործընթացի արդիականացմանն ուղղված մի շարք հիմնահարցեր՝ այդ թվում հետադարձ կապերի ստեղծումը ուսումնառության ժամանակ, կատարեցինք մի քանի արձանագրումներ, որոնք կներկայացնենք ստորև.

- Ուսումնական գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչի կողմից կիրառվող անձնակողմնորոշիչ մոտեցումներից, սեփական պարտականությունները գիտակցելուց և պատշաչ կատարումից:
- Ուսուցիչը պետք է անդադար կատարելագործի իր մանկավարժական հմտությունները, կիրառի նոր մեթոդական հնարներ, որպեսզի սովորողը հետաքրքրություններ գտնի դասի մեջ:
- Ժամանակի մարտահրավերներով պայմանավորված՝ ուսուցիչը պետք է ուսուցման նպատակների մեջ անպայման ունենա սովորողների կարողունակությունների ձևավորումը, կարծիքի դիրքորոման, աչժեքների զարգացման հնարավորությունների ստեղծումը:
- Հետադարձ կապը պետք է ուսուցչի համար դառնա ուսումնական գրծընթացը մշտադիտարկելու և համակարգելու գործիք, իսկ դրա կիրառման հիմնական նպատակը պետք է լինի սովորողի առաջադիմության ապահովումոն ու արժեհամակարգի սերմանումը:
- Սովորողի համար պետք է ստողծել այնպիսի միջավայր, որտեղ նա իրեն պահանջված ու կարևոր կզգա և բաց կլինի համագործակցության ու կարծիքների փոխանակման համար:
- Ուսուցիչը պետք է հաճախ դիմի հետադարձ կապի օգնությանը՝ որպես առաջնային նպատակ սահմանելով կրթության որակի և սովորողների առաջադիմության դրական միտումը:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բերենք մի քանի առաջարկություններ՝ պայմանավորված հետազոտության թեմայի արդիականությամբ.

- ✓ Սույն նյութի հետազոտության արդյունքում եկանք այն եզրահանգման, որ թեման շատ քիչ է ուսումնասիրված, ուստի համապատասխան գրականությունը ևս սուղ է: Ցանկալի կլիներ, որ ուսուցիչների համար էլ ավելի շատ լինեին ուսումնական ձեռնարկներ, որոնց ուսումնասիրությունը թույլ կտար համակողմանի պատկերացնել հոտազոտության առարկայի հիմնական դերն ու կիրառելության մեխանիզմները:
- ✓ Կարելի է դպրոցում գործող առարկայական մասնախմբերի անդամների միջև ևս հաճախակի կիրառել հետադարձ կապ՝ նպատակ ունենալով արձանագրել առկա խնդիրները, նպաստել ինքնազարգացմանն ու աշխատունակության բարձրացմանը:
- ✓ Կարածում ենք նպատակահարմար է ուսումնական գործընթացում ավելի հաճախ կիրառել սովորող-սովորող հետադարձ կապի մեխանիզմը, որը թույլ կտա սովորողների միջև ապահովել առողջ մրցակցություն:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

5. https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908
«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
6. http://www.ysu.am/files/Anna_Aleksanyan_%202016.pdf
Ա. Ալեքսանյան, Սովորողների ինքնավերլուծության և ինքնագնահատման մեթոդների կիրառման հիմնախնդիրը դասավանդման գործընթացում, ՀՊՄՀ, Երևան, 2016:
7. https://innostud.am/application/library/61279671.pdf
«Տարրական կրթության մանկավարժություն»:
8. http://storage.library.opu.ua/online/periodic/kms_2011_5/085-088.pdf
О.В. Олещук, «Эффективная обратная связь в обучении».

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

# Օրվա դասի պլան՝ անհատակողմներոշիչ մեխանիզմների կիրառությամբ

**Առարկան՝** Մայրենի

**Դասարանը՝** Չորրորդ

**Դասի թեման՝** Աթաբեկ Խնկոյանի «Ագռավն ու աղվեսը» առակը

**Դասի տիպը՝** Նոր նյութի հաղորդման դաս

**Դասի նպատակը՝** Զարգացնել ընթերցելու, պատմելու կարողությունները, խթանել ինքնուրույն խոսքը և դատողություններ անելու կարողությունը

**Դասի կահավորումը՝** Խնկո ապոր առակների բնագիրը, ցուցապաստառ, համակարգիչ՝ միացված համացանցին, քարտեր:

**Դասի ընթացքում կիրառվող մեթոդներ և հնարներ՝** ԳՈՒՍ, Տ–ձև աղյուսակ, Մ– ձև աղյուսակ, մտագրոհ, խմբային աշխատանք:

## ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Մտագրոհի միջոցով պարզել աշակերտների մտքում առաջացած նախնական գիտելիքները առակի ժանրի, նաև Աթաբեկ Խնկոյանի մասին, այնուհետև խմբավորել գրառումները Վեննի դիագրամի կիրառությամբ:



1. **Ո՞րն է առակի առանձնահատկությունը, քա՞նի մասինց է բաղկացացած**
2. **Ի՞նչ Գիտեք Ա. Խնկոյանի մասին**
3. **Թվարկե՞ք նրա առակների**

Այնուհետև ԳՈՒՍ աղյուսակում գրառել՝

- **Գիտեմ որ**
- **Ուզում եմ իմանալ**
- **Սովորեցի**

Ստացվեց, որ սովորողները միմյանց հետ կիսվեցին թեմայի վերաբերյալ իրենց նախագիտելիքներով: Հաջորդիվ սովորողները կկատարեն տեքստային աշխատանք: Դասարանը կբաժանվի 2 կամ 3 խմբի, և ուսուցիչը կհանձնարարի գտնել գոյականներ, ածականներ, թվականներ: Մինչ սովորողը տեքստում կփնտրի հանձնարարված խոսքի մասերը, արդյունքը կլինի նաև այն, որ մի քանի անգամ կընթերցի առակը: Տեքստային աշխատանքի ամփոփումից հետո, սովորողները գրատախտակի մոտ Տ–ձև աղյուսակի միջոցով կհատկանշավորեն ագռավին ու աղվեսին: Աշխատանքին զուգահեռ՝ ուսուցիչը կհետևի գրված բառերի ուղղագրությանը, ամեն մի սովորող կկատարի իր գրած բառի ձևաբանական վերլուծությունը բանավոր: Ստացվեց, որ առակի հերոսներին հատկանշավորելուն զուգահեռ,սովորողների մոտ կամրապնդվեն նաև լեզվական գիտելիքները: Կարելի է նաև կազմակերպել խմբային քննարկում ու լսել սովորողների կարծիքը ագռավի ու աղվեսի մասին: Սովորողները կլրացնեն Մ– ձև աղյուսակը՝

- **Ինչ իմացանք**
- **Ինչ էր պատահել**
- **Իմ կարծիքը**

Գիտելիքների ամփոփման փուլում կարելի է կիրառել նախօրոք պատրաստած տեսասահիկ, որի օգնությամբ ուսուցիչը կամբողջացնի սովորողների գիտելիքները կարճ հարցադրումների միջոցով՝

- **Ո՞րն էր առակի դրական կերպարը, հատկանշավորե՞ք ագռավին,**
- **ի՞նչ հասկացաք, ո՞վ էր ճիշտ,**
- **Ո՞րն էր առակի խրատական հատվածը:**

Այս փուլի վերջում կարելի է զարգացնել սովորողի ստեղծագործական մտածողությունը հետևյալ աշխատանքի միջոցով: Հանձնարարությունը կատարվում է խմբային: Սովորողներին հանձնարարվում է գրել ակրոստիքոս: Խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները:

**Գնահատում՝ փոխադարձ գնահատում**

**Տնային հանձնարարություն**